ՈՐՍՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՈՐՍԱՁԵՎԵՐԸ «ՍԱՍՆԱ ԾՌԵՐ» ԷՊՈՍՈՒՄ

«Սասնա ծռեր» ժողովրդական էպոսը, Մ. Աբեղյանի բնորոշմամբ, հայ հասարակության զարգացման նախընթաց փուլերի բազմակողմանի ու բովանդակալից արտահայտությունն է, հայ ժողովրդի մանկության հուշարձանը[1]։ Էպոսում ընդգրկված բազմաբնույթ ազգագրական նյութերը, թեև մեծ մասամբ խարսխված են վիպական-առասպելաբանական հիմքի վրա, սակայն ունեն համահայկական ընդգրկում և բովանդակություն։ Որոշակի հետաքրքրություն են ներկայացնում յուրացնող տնտեսաձևերից մեկի՝ որսորդության վերաբերյալ եղած նկարագրությունները։ Որսի կենդանիների ու արգելանոցների, որսորդության վարման եղանակների (անհատական թե խմբային), կիրառված որսաձևերի (պասիվ թե ակտիվ) և որսորդության հետ կապված այլևայլ հարցերի վերաբերյալ էպոսում եղած տեղեկությունները, որոնք բանավոր կերպով, սերնդեսերունդ փոխանցվելով, մեզ են հասել, շատ դեպքերում համընկնում են հայ պատմիչների գրավոր վկայություններին։

Էպոսի տարբեր պատումներում որսի կենդանիները համեմատաբար ավելի մեծ թիվ են կազմում, քան որսի թռչունները։ Որսի կենդանիներից հիշատակվում են նապաստակ (լպստրակ), աղվես, կուզ, կոռաբաշ (զռռաբաշկ), ուրջ, մարալ, գայլ, խոզ, ջեյրան, վերու տավար, վերու ոչխար, վոշակ, վերու այծ, իսազալ[2], ստյուծ և այլն, իսկ վայրի թռչուններից՝ բադ, կռունկ, կամավ, ճնճղուկ և լոր։ Չնայած որսի կենդանիներն ու թռչունները էպոսում մեծ թիվ չեն կազմում, սակայն դրանք Հայկական լեռնաշխարհում շատ տարածված տեսակներն են, որոնք, որոշ բացառություններով, այսօր էլ հիմնականում պահպանվել են մեր հանրապետության տարածքում։

Մատենագրական նյութերի վկայությամբ, պետականության առկայության պայմաններում, հայ արքունիքում հիմնում էին որսատեղի-արգելանոցներ, որոնք վերնախավի կողմից վերածվում էին հանգստի ու ժամանցի վայրերի։ Այս մասին Փավստոս Բուզանդը դրել է. «...և ապա զամենայն էրէս, և ըզգազանս հրամայեաց ժողովել թագաւորն, և լնուլ զքաղաքորմսն, զի լիցին նոցա տեղիք որսոց զբօսանաց ուրախութեան թագաւորութեան նորա»[3]։ Նման արգելանոցները վերնախավի կողմից վերցվում էին խիստ հսկողության տակ, վերածվում ամրացված գոտիների։ Այդ նպատակով է հիմնել Երվանդ թագավորը Ծննդոց անտառը. «Տնկէ և մայրի մեծի հիւսիսոյ կողմանէ գետոյն, և որմովք ամրացուցանէ, արգելլով ի ներքս այծեմունս երագունս, և գեղանց և զեղջերուաց ազգ, և ցիռս և վարազս, որք ի բազմութիւն աճեցեալ լցին զանտառն, որովք ուրախանայր թագաւորն յատուրս որսոց։ Եւ անուանէ զանտառն Ծննդոց»[4]։ Ծննդոց անտառը որպես արգելանոց հիմնելուց հետո, ինչպես երևում է այս նկարագրությունից, այնտեղ են բերվում որսի տարբեր կենդանիներ և այն վերածվում է արքունական որսատեղիի։ Մովսես Խորենացու մի ուրիշ վկայությամբ, Խոսրով թագավորը ևս Ազատ գետի շրջանում հիմնում է որսի արգելանոց և զբաղվում որսով. «Իսկ սորա զքաջութենէ և զբարի յիշատակաց անփոյթ արարեալ. զբօսանաց և հաւորսութեանց և այլոց որսոց պարապեալ. Նորին աղագաւ և անտառս առ Ազատ գետովն տնկէ, որ յանուն նորա կոչի մինչև ցայսօր ժամանակիս»[5]։

Արգելանոցները, ինչպես վկայում է Մովսես Խորենացին, վերցվում էին պետական խիստ հսկողության տակ, դրանց վրա նշանակվում էր որսի վերակացու. «...ոմն Վարաժ անուն պատանի լեալ, աշող յորս եղջերուաց և այծեմանց և վարազուց, դիպաձգութեամբ նետից կորո-

---

1 Սասնա ծռեր, խմբագրեց Մ. Աբեղյան, աշխատակցությամբ Կ. Մելիք-Օհանջանյանի. հ. Ա, Երևան, 1936, էջ 40—41 (այսուհետև՝ ՍԾ)։

2 Խազալ—վիթ, գազել (տե՛ս ՍԾ հ. Բ, մ. Բ, Երևան, 1951, էջ 747)։

3 Փաւստոսի Բուզանդացւոյ Պատմութիւն հայոց. Վենետիկ, 1832, գպր. Գ, գլ. Ը, էջ 18։

4 Մովսես Խորենացի. Պատմութիւն հայոց. Թիֆլիս, 1913, գիրք 2-րդ, գլ. ԽԱ, էջ 166։

5 Նույն տեղում, գիրք 3-րդ, գլ. Ը, էջ 265։

վի. զսա ի վերայ որսոց արքունականաց կարգէ. և չէնս պարգևէ նմա առ եզերբ զնտոյն, որ անուանեալ կոչի Հրաղդան»[6]։

Որսի նման արգելանոցներ էպոսում հիշատակվում են Սև սարում, Սեղան սարում, Ծովասարում, Ճապաղաջուրում, Ավագ սարում և այլ վայրերում։ Հայկական թագավորների նման, Մեծ Մ.երը ևս Ծովասարում հիմնում է որսի արգելանոց. պարսպապատում այն և այնտեղ լցնում որսի տարբեր կենդանիներ. ազատ ժամերին զբաղվելով որսով.

Տղեն գնաց Ալաջու տաղի բոլոր տվեց բազան քաշել,
Որ ամբողջ որսը լցի մեջ,
Աշուն էթա, որս էնա...
Մև առժամանակ դարուն կէթա գարգըխներ կրրացա,
Աշուն կէթա գարգըխներ կըզարգա,
Մեհերըն՝ Առյուծաձև Մհեր, կըմտնի միջի որսըն կէնա...[7]

Դավիթը, անտեղյակ հոր որսի արգելանոցից, որս է անում Պառավի կորեկի արտում։ Զնայած խրատատու Պառավը դժգոհում է, սակայն գիմում է Դավթին.

Քու խոր չունի՞ ավզուշի տեղ,
Որ Պառավի կուրկի մեջ ավզուշ կ՝էնիս[8]։

Նա սովորեցնում է իսկական որսասարի՝ Ծովասարի տեղը.

Իլի՛, կինա՛ քու խոր նեճրի սար,
Վերու ոչխար կա, մարալ կա, խազալ կա,
Սպանը՛, բի՛, քի խամար ապրուստ էրա՛[9]։

Ցանկանալով բորբոքել երիտասարդ Դավթի հետաքրքրասիրությունը դեպի արգելանոցի առատ որսը, Պառավը շարունակում է.

Գնա Ծովասար. ջարդա նեճիր,
Որ դու ուտիս, գեղ լե հետ[10]։

Դավիթը, իմանալով հոր որսասարի մասին, խնդրում է Քեռի Թորոսին և Զենով Հովանին, որ իրեն ցույց տան Ծովասարի տեղը։ Երբ նա հայտնվում է Ծովասարում, զարմանում է, որ արգելանոցում կան «...աստծու ստեղծած զըմեն անասուններ ու խավքեր»[11]։ Նրա զարմանքը փարատում է Զենով Հովանը, բացատրելով, որ արգելանոցում եղած որսի կենդանիները «...զըմեն քո խերն ի պիրե ըստեղ, որ մենք մեր ուզած վախտ գանք, մեր ավն անենք»[12]։ Այնուհետև հորեղբայրը Դավթին մանրամասնորեն պատմում է որսարարի մասին.

...Դա՛վիթ, էսիկ քու խոր նեճրի սարն ի,
Հառաջ, քու խոր վխտին
Էսա՛ սարի պուլուր բազան ինք քաշէ,
Մկա Մսրամելիք եկիր ի,
Զրազանքտիր քակիր ի,
Զվերու օչխար, մարալ, ինչ օր կա,
Կը կա, կը թալնը՛, կը լոխպը, կը տանը[13]։

---

8 ՍԾ, հ. Ա, Զ պատում, էջ 261։

7 Սասնա ծռեր, պատումների գրառումները և բնագրի պատրաստումը Ս. Հարությունյանի և Ա. Սահակյանի. հ. Դ, Երևան, 1979, Թ պատում, էջ 359։

8 ՍԾ, հ. Ա, Զ պատում, էջ 261։

9 Նույն տեղում, Ե պատում, էջ 180։

10 ՍԾ, հ. Բ, մ. Բ, ԺԷ պատում, էջ 501։

11 Նույն տեղում, ԺԶ պատում, էջ 451։

12 Նույն տեղում, էջ 451—452։

13 ՍԾ, հ. Ա, Ե պատում, էջ 181։

Օտարների արշավանքների ժամանակ որսի արգելանոցները քանդելու և որսորդության անկում ապրելու մասին էպոսում եղած այս կարգի վկայություններն ընդգծվում են նաև հայ պատմիչների աշխատանքներում։ Այսպես, Եղիշեի մի հաղորդումից ակնհայտ երևում է, որ «սպառեցան բարակք որսականք և խցեալ կուրացան արշաւանք որսորդաց...»[14]։

Դավիթը որոշում է նորից վերականգնել հոր կիսակործան որսասարի պարիսպները՝ այնտեղ բերելով որսի տարբեր կենդանիներ։ Հետաքրքիր է, որ Մսրա Մելիքը Դավթի այս նախաձեռնության մեջ տեսնում է ագատության և ինքնուրույնության ձգտում, ուստի փորձում է նորից կործանել վերանորոգված արգելանոցը։

Էպոսում բավական մեծ թիվ են կազմում գեմերի տարբեր տեսակները. հիշատակվում են գուրզը (թոփուզ)[15], ինմանը (պարան), նետ-աղեղը, սուրը, քուրը, դաշույնը, վանանը, նիզակը, կոպալը, պովրտե կոոը (երկաթե կոռ), ճոկանը, ցանցը և այլն։

Որսորդության մեջ վերոհիշյալ զենքերից մի քանիսի օգտագործման եղանակների վերաբերյալ էպոսում կան ուղղակի վկայություններ։ Այսպես, Դավիթը վերցնելով իր «...գուրզ ու քման, նետ ու անեղ, ընկավ ուրեն ավշրթենի»[16]։ Գուրզ նետելու նկարագրությունը երբեմն այնքան ընկալելի է էպոսում, որ կարծես թողնում է դրա օգտագործման իրական տպավորություն։ Հանդիպելով Քեռի Թորոսին և նրան չճանաչելով, Դավիթը գիմում է գուրզին.

Դավիթ որ զգուրզ բերեց...
Դավթի գուրզ բոշի գնաց՝
Գիլու պեստ կ՚ոռներ,
Շան պեստ կը կրնգրզտեր...
Որ գուրզ գիսավ գետին
Գուրնի պեստ շեր ջրրճեց[17]։

Զեռքի ցուպը կամ կոպալը էպոսում նույնպես հանգես է գալիս որպես որսորդական զենք։ Այն օգտագործում է Դավիթը որսի արգելանոցում.

...յառավոտ, կոպալ, գրեց վըր թեվին ու գնաց։
Դարգլըխներ զարգյեց, աշուն էր,
Է՚, յոթ տարվա որս լցվե մեջ.
Ըմա՚լ ջառտե՚ց...[18]

Մանկահասակ Դավթի համար վաղաժամ համարելով ուրիշ աշխատանքով զբաղվելը, Զենով Հովանը նրան ասում է.

Ա՚ռ քու ճոկան, քըզ համար լոր-մոր զարգ,
Քըզ համար Ֆրոա, հըլա դու պստիգ իս[19]։

Առաջին անգամ տեսնելով հոր նետ ու աղեղը, Դավիթը զարմացած դիմում է հորեղբորը, թե «էնա ինչ կոռուկ փետ առ»։ Զենով Հովանը պատասխանում է.

—Դավի՚թ, էտա քու խոր նետ անեղ ա,
Ինչ կ՚էրթեր, նեճիր կ՚աներ[20]։

Նետի չափազանցված նկարագրությունը տրված է Սասունից գլխապատառ փախած Կոզբադինի՝ իրեն ծաղրող կանանց ուղղած պատասխանում.

---

14 Եղիշէի Վասն Վարդանայ և հայոց պատերազմին. Երևան, 1957, էջ 203։

15 Գուրզը «դա մի «չոմախ» է, գլուխը ծանր երկաթ հագցրած» (տե՚ս Մ. Արեղյան. Երկեր. հ. Ա, Երևան, 1966, էջ 412)։

16 ՍՍ, հ. Բ, մ. Ա, Թ պատում, Երևան, 1944, էջ 375։

17 Նույն տեղում, էջ 303։

18 ԱՍ, հ. Գ, Թ պատում, էջ 376։

19 Նույն տեղում, Գ պատում, էջ 160։

20 ՍՍ, հ. Ա, ԻԱ պատում, էջ 901։

Ուրանց նետ կա քընց ձիթխրցի գերան,
Որ կը զարկեն, բերան կը բացվեր քընց պատուհան[21]։

Գ. Սրվանձտյանցի կողմից գրի առնված Վարդա լեռան արշալույսը պատկերող ավանդության համաձայն կայծակը հրեղեն նետն է, իսկ ծիածանը՝ աղեղը[22]։

Նետ ու աղեղով որսաձևին անդրադարձել է Մովսես Խորենացին։ Խոսելով Սանատրուկ Թագավորի մասին, նա գրել է. «Սա Թագաւորեալ յերկոտասաներորդի ամի Արտաշիսի արքայի Պարսից, կեցեալ ամս երեսուն՝ մեռաւ յորսի, նետի ուրուք դիպեալ փորոտեացն. իբր թէ վրէժս հատուցեալ ընդ շարշարանաց սրբոյ զդստերն»[23]։ Պատմիչն այս մասին որոշ տեղեկություններ է տվել Արշակ Թագավորի կողմից Գնելի սպանության մանրամասները նկարագրելիս. Արշակը «...հրամայեաց նոյն Վարդանայ ի նմին որսին սպանանել զԳնել, որպէս թէ ընդ խաբս ինչ վրիպակաւ, երէոյ կամելով ձգել՝ նմա պատահեաց նետն»[24]։

Որսորդության մեջ կիրառված իրական զենքերի հետ մեկտեղ էպոսում խիստ ընդգծվում են Թուր Կեծակին[25], Քուռկիկ Ջալալին և առասպելական մյուս զենք ու զրահները, որոնք Սասնա հերոսները ձեռք են բերում ծովի հատակից[26]։ Այս զենքերն ամենազոր են, որոնց ոչ մի արգելք դիմակայել չի կարող։ Էպոսի պատումներից մեկում այս միտքը Դավթին ուղղակիորեն հուշում է Քուռկիկ Ջալալին, թե «քու Թուրն որ կա, կայծակից առ»[27]։ Սակայն ամենազոր Թուր Կեծակին, որով կռվում էին Սասնա դյուցազունները, Փոքր Մհերի ձեռքում անզոր է դառնում աստծու կողմից ուղարկած հրեշտակների դեմ մենամարտելիս.

Աստված յոթ ձիավոր խրեշտակ ճամխեց
Խետ Մհերին կռվելու։
Կես օրովնե չում իրիկուն կռվան.
Մհեր Թուրն Կեծակին կը թալեր,
Խրեշտակներուն չէր բռնի,
Ամա խրեշտակներ Մհերին շատ շարշարեցին[28]։

Մհերն ստիպված աստծուց խնդրում է ողորմածություն, փակվելով «Ակոփու քարի տակ»[29]։

«Սասնա ծռեր» էպոսում հիշատակվում է որսին հետապնդում և ձիով հետապնդելու եղանակները։ Մհերը որսին հետապնդում է հետիոտն և չկարողանալով հասնել, ձեռքի ցուպը մի կողմ է նետում, դիմելով Թորոսին.

Ջանավար օր կա, կը փախնի,
Ջըմ կընա հասնի լարելով[30]։

Թորոսը նրան խորհուրդ է տալիս, որ մյուս քեռուց ձի խնդրի և «...խեծի, գնա նեհրութեան»[31]։ Դավիթը նույնպես որս է անում հետիոտն՝ նետ ու աղեղով[32]։

---

21 Գ. Սրվանձտյանց. Երկեր. հ. 1, Երևան, 1978, մ. Բ, էջ 100։
22 Նույն տեղում, մ. Ա, էջ 77։
23 Մովսես Խորենացի, գիրք 2-րդ, գլ. ԼԶ, էջ 161։
24 Նույն տեղում, գիրք 3-րդ, գլ. ԻԳ, էջ 284։
25 Թուր Կեծակին համարվում է ամպրոպային աստծու կայծակնային զենքերից (տե՛ս Ս. Հարությունյան. Վիշապամարտը «Սասնա ծռեր»-ում.—ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հաս. գիտ.», 1981, № 11, էջ 78)։
26 Մի քանի պատումով երկնքից ընկնում է կայծակը (շանթեքար), որից Քեռի Թորոսը գարբնի ձեռքով շինել է տալիս Սասնա տան Կայծակի Թուրը (տե՛ս Մ. Աբեղյան. Երկեր. հ. Ա, էջ 412)։
27 ՍՄ, հ. Բ, մ. Բ, ԺԳ պատում, էջ 275։
28 ՍՄ, հ. Ա, ԻԳ պատում, էջ 1085—1086։
29 Նույն տեղում, ԺԹ պատում, էջ 845—846։
30 ՍՄ, հ. Բ, մ. Ա, Ը պատում, էջ 262։
31 Նույն տեղում, էջ 263։
32 ՍՄ, հ. Ա, ԻԳ պատում, էջ 1050։

Որսորդության առավել արդյունավետ եղանակ էր որսի կենդանիներին ձիով ճեռապնդելը, որին դիմում են էպոսի հերոսները։ Սանասարն ու Բաղդասարը -ուրենց քամիե ձիերոՀ հեծած, նետ ու աղեղով զինված, հետապնդում են վայրի ոչխարներին ու որսում[33]։ Մհերը տեսնելով, որ երկու երիտասարդ ճանապարհին հետապնդում են ջեյրանին և չեն կարողանում որսալ, իր ձին քշում է և անմիջապես որսում կենդանուն[34]։ Ձիով որսը էպոսում հաճախ արվում է բազեի օգնությամբ[35]։ Այս որսաձևով զբաղվում է Դավիթը.

Քուռկե Ջալին դուրս քաշեց,
Ու հեծավ, ու գնաց ավրղուշ ընելու։
Դնաց արտ մի կորեկի ռաստ եկավ,
Ու բազեն թողեց մըչ կորկին,
Ու բավականի լոր բռնեց[36]։

Էպոսում բազեով որսը վերաբերում է թռչնորսությանը, մասնավորապես՝ լորի որսին։ «Սասնա ծռերի» պատումներից մեկում բազեով (ցուլուր, ցուլուլ) որսի նկարագրությունը տրված է այնպիսի պարզությամբ ու հստակությամբ, որ թողնում է այդ որսաձևի կենդանի տպավորություն.

Դավիթն օր էկավ, «քը՛շտ, քը՛շտ, քը՛շտ» էրեց,
Լոր թռավ.
Օր լոր թռավ՝ ցուլուլ թողեց.
Է՛, ցուլուլ դենա գնաց, լոր՝ դենա,
Ջո՛ւր կծիկ բռադ էղավ։
Կծիկն օր բռադ էղավ, կծկե՛ց,
Գնաց, ցուլուլին բռնեց[37]։

Սովորաբար բազեով որսն ուղեկցվում էր որսաշներով։ Հայտնի է, որ այս որսաձևը կիրառվել է բազմաթիվ ժողովուրդների որսավարության մեջ՝ պատմական զարգացման տարբեր փուլերում։ Սակայն էպոսում այս որսաձևի մասին չի հիշատակվում։ Մինչդեռ, որսորդական շների առկայության մասին որոշակի վկայություն ունի Փավստոս Բուզանդը. «Եւ ոչ ոք էր՝ որ մնացեալ էր առ թագաւորին, և ոչ գունդ և այրեաի,—գրել է նա,—բայց միայն սակաւ սպասաւորաք հանդերձ և որսոցն պառակեաք (ընդգծումը մերն է—Ա. Պ.), և ռահվիրայ մարգկան, և խառնախանշ խորանապահ զօրուն...»[38]։

Հայ իրականության մեջ բազեով որս անելու մասին հետաքրքիր վկայություններ ունի Ղազար Փարպեցին. «Եւ շատք ի մանր մանկանց նախարարաց որդւոցն դաստիարակաք և ծառայիւք զայլ և այլ սեռս ի թռչնոցն որսացեալ բազայիւք՝ դարձեալ բերիցեն ի յաճումն ընթրեացն ուրախութեան. և այսպէս առլցեալք յուրաքանչիւր որսով՝ գնան ուրախացեալք»[39]։

Որսի այնպիսի միջոցներ, ինչպիսիք են օղապարանը, ցանցը և տարբեր ծուղակները, էպոսում նկարագրված են որոշակի հստակությամբ։ Չնայած դրանք հակառակորդի կողմից հիմնականում օգտագործվում են էպոսի հերոսների դեմ մղած պայքարում, սակայն մատենագրական ու ազգագրական վկայությունների համաձայն այդ միջոցները կիրառվել են նաև որսորդության մեջ։

Թշնամու վեցօրյա փորձերը Մհերին ճոպանով բռնելու համար անհաջողությամբ են ավարտվում, որովհետև Մհերը կտրում էր այն և ազատվում։ Սակայն «Վրա օխտ օրվա

33 ՍՍ, հ. Բ, մ. Բ, ԺՁ պատում, էջ 396։

34 ՍՍ, հ. Գ, Ն պատում, էջ 291։

35 էպոսի առանձին պատումներում «բազեն» կոչվում է նաև «ձեռացաղուշ» (տե՛ս ՍՍ, հ. Բ, մ. Բ, ԺԱ պատում, էջ 126)։

36 ՍՍ, հ. Բ, մ. Ա, Բ պատում, էջ 70։

37 ՍՍ, հ. Գ, Թ պատում, էջ 374—375։

38 Փ ա վ ս տ ո ս Բ ո ւ զ ա ն դ, դպր. Գ, գլ. Ի, էջ 52։

39 Ղ ա զ ա ր Փ ա ր պ ե ց ի. Պատմութիւն Հայոց և թուղթ առ Վահան Մամիկոնեան. Թիֆլիս, 1907, էջ 22։

ընդոնք ճոպանն օխտ դատ երին ու ընդրով բռնին Մհերին»[40]։ Պատումներից մեկում Մհերին «որսում» են ցանցով։ Մհերը

Օր դնաց յօդաց ճանապարհի,
Բերեցին թալեցին ցանց,
Մհերին բռնեցին[41]։

Դավթի ուշադրությունը շեղելու նպատակով, վառվող կրակները վերև են գցում և երբ Դավիթը նայում է դրանց, նրան շղթայում են.

Պիրին, կազեր վառըցին,
Թալըցին էրկնուց հիրևս.
Կազեր վիրուց էկավ տակ.
Տավիթ ըշկից տաղ վի,—
Ջընչիլքեր թալըցին, Տավթի թևքեր կապրցին[42]։

Դավթի դեմ թշնամին օգտագործում է օղապարան։ Օղապարանի օգտագործման մասին հիշատակություն ունի Մովսես Խորենացին, Արտաշեսի կողմից Սաթենիկին առևանգելու հայտնի վիպական նկարագրի մեջ. «Հեծաւ արի արքայն Արտաշէս ի սեաւն գեղեցիկ, և հանեալ զոսկեօղ շիկափոկ պարանն, և անցեալ որպէս զարծուի սրաթև ընդ գետն, և ձգեալ զոսկեօղ շիկափոկ պարանն՝ ընկէց ի մեջք օրիորդին Ալանաց, և շատ ցաւեցոյց զմէջք փափուկ օրիորդին, արագ հասուցանելով ի բանակն իւր»[43]։

Թշնամին Դավթին բռնելու նպատակով դիմում է նաև երկաթե ցանցի օգտագործմանը։ Այն պատրաստված էր ձկնորսական ցանցի օրինակով.

Բիրին, զատնը՝ խիտ զնչիլ թալիցին,
Դավիթ էնդեղ բռնիցին,
Ի՞նչրխ բռնեցին.—
Ջինչիլ թուրը՝ օրինակ չինած էր,
Դավիթ քչից, կինաց մեչ[44]։

«Սասնա ծռերում» ծուղակը հիշատակվում է Մսրա Մելիքի կողմից Դավթին ճաշի հրավիրելու նկարագրի մեջ։ Ցանկանալով ազատվել իր ախոյանից, Մելիքը դիմում է որագայթին.

Դավիթ գընաց թախ Մսրամելիք։
Մսրամելիքն էլ գետին փորեր,
Ջուլ քաշեր վերեն, խող քաշեր վերեն[45]։

Դավիթն անտեղյակ այս ծուղակից, մոտենում է Մելիքի վրանին և երբ ցանկանում է ներս մտնել «Գրըմփ... գնաց խոր վեր»[46]։ Ջենով Հովանի այն հարցին, թե ինչպես է ինքը ընկել ծուղակը, Դավիթը պատասխանում է.

---

40 ՍՄ, հ. Բ, մ. Բ, ԺԲ պատում, էջ 216։ Պատումներից մեկում ճոպանի փոխարեն հանդես է գալիս քամանը (պարան).

Ըսեցին,—Բերեք, քաման թալինք, բռնինք։
Քաման թալեցին, բռնեցին (տե՛ս ՍՄ, հ. Բ, մ. Ա, Բ պատում, էջ 98)։

41 ՍՄ, հ. Գ, Ե պատում, էջ 233։

42 ՍՄ, հ. Ա, ԺՁ պատում, էջ 810։

43 Մովսես Խորենացի, գիրք 2-րդ, գլ. Ծ, էջ 179։ Հայաստանի տարածքում գտնված ժայռապատկերներում օղապարանի պատկերումը նույնպես վկայում է որսորդության մեջ դրա լայն կիրառության մասին։

44 ՍՄ, հ. Ա, Ե պատում, էջ 213։

45 Նույն տեղում, ԺՀ պատում, էջ 828։ Հմմտ. հ. Գ, Ա պատում, էջ 44։

46 Նույն տեղում, ԺԱ պատում, էջ 580։ Հմմտ. հ. Գ, Ժ պատում, էջ 421։

Խրոխպեր, իս բրովիր իմ.
Քանց գել բրոնած...[47]

Դավթի պատասխանից ակնհայտ երևում է, որ նա իր ծուղակն ընկնելը համեմատում է գայլին նման եղանակով որդայթը գցելու տեսարանի հետ։ Ազգագրական նյութերի վկայությամբ, որսորդության մեջ կիրառված այս եղանակը բավական լայն տարածում ուներ Հայաստանում։ Ծուղակները պատրաստում էին որսի կենդանիների համար ճանապարհներ ծառայող հատվածներում և խնամքով ծածկում։

«Սասնա ծռերումս» որոշակիորեն ընդգծվում են որսավարության ավանդական կանոնների պանպանումը և խմբային կերպով որս անելու եղանակները։ Սասունցի քաջերը որսորդության մեջ նախընտրում են պայքարի հավասար և ազնիվ սկզբունքները։ Թերևս դրա լավագույն օրինակը Մհերի մղած կռիվն է առյուծի հետ։ Սկզբում նա կռվում է սրով և ձիով, սակայն մի կողմ է նետում զենքը, իջնում ձիուց և մերկ ձեռքերով գոտեմարտի է բռնվում գազանի հետ։ Հավասար պայքարում Մհերը պատռում է առյուծի երախը[48]։ Նույն բանը նկատելի է նաև Դավթի վարքագծում։ Կինելով Ծովասարում և տեսնելով արգելանոցում փակված որսի կենդանիներին, նա պահանջում է բացել արգելանոցի դռները, ազատ արձակել կենդանիներին և բաց դաշտում որսալ նրանց.

Դավիթ էսաց.—Ադպես չէղի.
Ադ յեղսիր ին, ատոնց միս չուտվը.
Իս տուր բանամ, տուս էնիմ,
Ո՛ր կտրիչ է, ուր խամար թըղ բռնի[49]։

Որսորդության մեջ Դավիթը գործում է այն ազնիվ սկզբունքով, թե «տղամարթ էն ա, որ յարցրկայ, նոր ղարգա, վերու որսին»[50]։

Հետաքրքիր են որսի մեկնելու, դրսում գիշերելու և միայն որոշակի տարիքի դեպքում որսորդությանը մասնակցելու հարցադրումները էպոսում։ Երբ մանկահասակ Դավիթն իմանում է, որ հորեղբայրը պատրաստվում է մեկնել Սև սարում որսորդության, խնդրում է, որ իրեն ևս տանի որսի, սակայն հորեղբայրը մերժում է նրան, հետևյալ պատճառաբանությամբ.

...Տավիթ, տու տղա՛յ իս, տու էրեխա՛յ իս,
Ես տէրթամ Սև սար նեճիր,
Կիշեր տը մնամ տուս, կիշեր տը քընիմ տուս.
Տու չըս կ՛էնի մնաս տուս, չըս կ՛էնի քընիս տուս[51]։

Որսորդությունը, ինչպես նաև զինվորությունը, որպես պատանեկությունից հասուն տղամարդու շրջանի անցման հատկանիշներ, խիստ ընդգծվում են էպոսում։ Որոշ ուսումնասիրողների կարծիքով, այդ հատկանիշները համարվում են հին նվիրագործման ծեսերի թույլ արձագանքները[52]։ Եվ պատահական չէ, որ էպոսի հերոսները ենթարկվում են տարբեր փորձությունների, որոնցում ընդգծվում են հնարամտության և քաջության դրսևորման, դժվարությունները հաղթահարելու, անելանելի վիճակից դուրս գալու և այլ արգելքների հաղթահարման պարտադիր սկզբունքները։ Երբ Փոքր Մհերը, որը հորից ժառանգել էր այս հատկանիշները, իր քեռիների հետ մեկնում է որսի, որսածը տալիս է նրանց և ինքը դատարկ ձեռքերով տուն գալիս, Դավիթը խիստ հանդիմանում է նրան, հետևյալ խոսքերով.

---

47 ՍԾ, հ. Ա, ԺԱ պատում, էջ 580։

48 ՍԾ, հ. Գ, Թ պատում, էջ 357—358։ Չնայած այս դրվագը խիստ վիպական, առասպելական է, մինչև իսկ Աստվածաշնչում արտահայտված, սակայն կարևորը պայքարի հավասար եղանակների ընտրության հարցն է, որը էպոսում հանդես է գալիս որսորդության մեջ որսի ավանդական կանոնների դրսևորման օրինակ։

49 ՍԾ, հ. Ա, Բ պատում, էջ 72։

50 ՍԾ, հ. Բ, մ. Ա, Ը պատում, էջ 287։

51 ՍԾ, հ. Ա, ԺԷ պատում, էջ 797։

52 А. И. Першиц. О некоторых этнографических сюжетах в армянском народном эпосе «Давид Сасунский».—ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (Հաս. գիտ.), 1951, № 8, էջ 59։

Փողցի զավա՞կ ես դու, իմ զարմից լիս,
Որ լիս կենա նեճիր էնե[53]։

Դավթի հանդիմանանքի խոսքերը հասկանալի են. չէ՞ որ որսորդությունը համարվել է սասունցի քաջերի ժառանգական զբաղմունքը, որպես խիզախության խորհրդանիշ, որտեղ գործող ավանդական կանոնների ու նորմերի խախտումը առաջ է բերում Դավթի դժգոհությունը։

Էպոսի պատումներից մեկում, Զենով Հովանը Դավթին մանրամասնորեն բացատրում է խմբային որս կազմակերպելու ավանդական սկզբունքները։ Այդ որսաձևի ժամանակ մի քանի մարդ, մտնելով թփուտները, աղմուկ աղաղակով դուրս էին հանում որսի կենդանիներին իրենց թաքստոցներից և քշում արգելանոցի բաց տեղերը, իսկ մյուսները պատրաստ վիճակում որսում էին.

...Կական, Ասլան նեճիր կը լարեն,
Կը բերեն, կը լցնեն ընա տեիր վե,
Քու խեր կը զաներ, կը սպաներ[54]։

Խմբային որսորդության լավ օրինակ է պատումներից մեկում Դավթի, Զենով Հովանի և ուրիշների կողմից վայրի ոչխարի համատեղ որսը Սովասարում[55]։ Էպոսում եղած նման կարգի վկայությունները իրենց զուգահեռներն ունեն XIX դարի երկրորդ կեսի ազգագրական նյութերում, ինչպես նաև հայ պատմիչների վկայություններում։ Այսպես, Ագաթանգեղոսը տվել է Տրդատի կողմից այս որսաձևի նախապատրաստման մանրամասները՝ տագնապ գցելը, թակարդներ լարելը, զենքերը և ցանցերը նախապատրաստելը և այլն։ «Արդ՝ աւուրս վեց ի խոր տրխրութեան և յանհնարին տրտմութեան կացեալ թագաւորն առ անձուկ սիրոյ դեղոյն Հռիփսիմեայ,—գրել է նա,—ապա յետ այսորիկ ժամ տուեալ որսոյ՝ ամենայն զորաց ածել կուտել զպառականն, խուճապական սփռեալ, երագաշ տուեալ, թակարդ ձգեալ, կամեցեալ որս առնել, երթալ ի դաշտն Փառական Շեմակաց»[56]։

Մարզաժամանցային, ուժի ու ճարպկության ցուցադրման իմաստից բացի, որսորդությունը ունեցել է նաև տնտեսական նշանակություն։ Երբ էպոսի հերոսները կարիքի մեջ են լինում, անմիջապես դիմում են որսի։ Որսի միսն օգտագործում են տնտեսության մեջ, իսկ մորթիներից տարբեր տեսակի հագուստ պատրաստում։ Գառնարած Դավիթը վայրի կենդանիներին ու գազաններին դառներին խառնած քաղաք է բերում և չնայած բնակիչները սարսափի մեջ են ընկնում, սակայն

Լպստրակ զինիցին խատ ուլերուն, կերան.
Ազվիս, կուզ էրին քուրք, խագան[57]։

Կորեկի արտի տեր Պառավը Դավթին լորի որսի համար նախատելուց հետո, նրան խորհուրդ է տալիս.

Գինա Սիվ սա՛րը, մեկ տաս խատ վիրու ուխչար ըի՛,
Էրա կավքմա, հա՛ կի, հա՛ կի, իսկի չի խլսի[58]։

Սասնա դյուցազուն որսորդներն իրենց որսած վայրի կենդանիների մսից բաժին են հանում համագյուղացիներին։ Դրա լավագույն օրինակը Մեծ Մհերի կողմից Սովասարում որսած որսի բաժանումն է.

Ամեն տարի կէրթեր, ավ կըզաներ, կըբերեր,
Կըբերեր, բաժաներ գյուղացոնց վրեն[59]։

---

53 ՍՄ, հ. Ա, ԻԳ պատում, էջ 1018։
54 Նույն տեղում, ԻԱ պատում, էջ 903։
55 Տե՛ս նույն տեղում, ԻԴ պատում, էջ 1047։
56 Ա գ ա թ ա ն գ ե ղ ո ս. Պատմութիւն հայոց. Թիֆլիս, 1909, գլ. Ի, էջ 113։
57 ՍՄ, հ. Ա, Ե պատում, էջ 179։
58 Նույն տեղում, Թ պատում, էջ 402։
59 ՍՄ, հ. Գ, Է պատում, էջ 256։

Առատ որս անելուց հետո, Մհերը դիմում է սասունցիներին, որ գնան Նովասար և բերեն իր որսած կենդանիները.

...Ճերմակ օչխար, կարմիր մարալ՝ հազարն էղե մե կոպեկ,
Բերե՞ք, լցե՞ք Սասուն, կերե՞ք,
Դրվա էրե՞ք Առյուծաձև Մհերին։
Կէթան, չրվներ կըշըլգեն սասունցիք,
Կէթան, կրբերեն, կուտեն, կրխմեն,
Դրվա կէնեն Մհերին[60],

Որսած կենդանիների մսից ազգակիցներին և հարևաններին բաժին հանելու պարտադիր ավանդական սկզբունքները հայ իրականության մեջ երկար հարատևեցին, որոնց արմատները, հավանաբար, առնչվում են պատմական զարգացման այն հնագույն շրջանի հետ, երբ ինչպես որսի կազմակերպումը, այնպես էլ սպառումը կատարվում էր խմբային ուժերով։

Ա. Ս. ՊԵՏՐՈՍՅԱՆ

60 Նույն տեղում, Թ պատում, էջ 359։